Հաստատված է
«ԷՖՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ»
փակ բաժնետիրական ընկերության
Միակ բաժնետիրոջ
23.01.2025թ. N 23/01/2025 որոշմամբ
Գործադիր տնօրեն՝ Վաչիկ Գևորգյան

«ԷՖՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ 2025

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. «Էփրիքոթ Կապիտալ» ՓԲԸ-ի պահառության կանոնակարգը (այսուհետ՝ Կանոնակարգ) մշակված է Հայաստանի Հանրապետության արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրությանը, Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերին համապատասխան և կարգավորում է Պահառուի կողմից իրականացվող արժեթղթերի պահառության գործունեության հետ կապված պայմանները և ընթացակարգը:

ԳԼՈՒԽ 2. ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Կանոնակարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝
1) **«Օրենք»՝** «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքը.
2) **«Պահառու»՝** «Էփրիքոթ Կապիտալ» ՓԲԸ, որը գործում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրված համապատասխան լիցենզիայի հիման վրա.
3) **«Հաճախորդ»՝** անձ, որի հետ Պահառուն կնքել է Պահառության պայմանագիր կամ «Էփրիքոթ Կապիտալ» ՓԲԸ-ի Բրոքերային (դիլերային) գործունեության կազմակերպման կանոնակարգի համաձայն՝ Բրոքերային ծառայությունների մատուցման և բրոքերային հաշիվների սպասարկման պայմանագիր (այսուհետ՝ Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագիր): Պահառուի հաճախորդներ կարող են հանդիսանալ այն ֆիզիկական անձինք, իրավաբանական անձինք, պետությունը կամ համայնքները, որոնք պահառության հանձնված արժեթղթերի սեփականատեր են կամ այդ արժեթղթերի նկատմամբ ունեն այլ գույքային իրավունքներ (հավատարմագրային կառավարիչ կամ գրավառու), ինչպես նաև այլ պահառուն, այդ թվում՝ երբ վերջինս Պահառուի մոտ հանդես է գալիս որպես անվանատեր.
4) **«Անվանատեր»՝** անձ որի անունով անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրում, Կենտրոնական դեպոզիտարիայում կամ այլ պահառուի մոտ (այդ թվում՝ օտարերկրյա կենտրոնական դեպոզիտարիայում կամ օտարերկրյա պահառուի մոտ)՝ առանց սեփականության իրավունքի փոխանցման գրանցվում են այլ անձանց սեփականության իրավունքով պատկանող անվանական արժեթղթերը: Անվանատեր կարող են լինել պահառության գործունեության լիցենզիա ստացած իրավաբանական անձինք, ինչպես նաև օտարերկրյա այն պահառուները, որոնք իրենց երկրի օրենքների և այլ իրավական ակտերի համաձայն իրավասու են իրենց անունով այլ անձանց պատկանող արժեթղթերի հաշիվներ ունենալ և վարել.
5) **«Պահառության պայմանագիր»՝** պայմանագիր, որի հիման վրա ծագում են

Հաճախորդի և Պահառուի իրավունքներն ու պարտականությունները՝ կապված պահառության գործունեության շրջանակում Պահառուի կողմից Հաճախորդին պահառության ծառայություններ մատուցելու հետ, և որի անբաժանելի մասն է կազմում սույն Կանոնակարգը, Սակագները, Պահառուի՝ Հաճախորդների դասակարգման և տեղեկատվության փոխանակման կանոնակարգը (այսուհետ՝ Հաճախորդների դասակարգման և տեղեկատվության փոխանակման կանոնակարգ) և Պահառուի՝ Անձնական տվյալների պաշտպանության քաղաքականությունը (այսուհետ՝ Անձնական տվյալների պաշտպանության քաղաքականություն).

6) **«Պահառության հաշիվ»՝** Հաճախորդի, Հաճախորդի հաշվում հաշվառվող արժեթղթերի և դրամական միջոցների, այդ արժեթղթերի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների, արժեթղթերի գծով ստացված եկամուտների, արժեթղթերի հաշվառման ընդունման և գրառումների կատարման ժամկետների և օրենսդրությամբ սահմանված այլ տեղեկությունների վերաբերյալ Պահառուի կողմից վարվող էլեկտրոնային գրառումների ամբողջություն.
7) **«Հանձնարարական»՝** Հաճախորդի կողմից Պահառուին ներկայացվող՝ Գործառնությունների կատարման կարգադրություն.
8) «**Գործառնություն**»՝ Հաճախորդի Հանձնարարականի, Թողարկողի կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ անձանց դիմումի հիման վրա իրականացվող գործողություն, որի արդյունքում տեղի է ունենում Պահառության հաշվի բացում, Պահառության հաշվում առկա տեղեկությունների փոփոխություն, Պահառության հաշվի փակում, Պահառության հաշվի մնացորդի փոփոխություն (Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագիր կնքած Հաճախորդների դեպքում՝ Բրոքերային հաշվի մնացորդի փոփոխություն), այլ տեղեկությունների գրանցում և/կամ տեղեկությունների տրամադրում.
9) **«Ազատ առաքում»՝** արժեթղթերի մի հաշվից մյուսին արժեթղթերի փոխանցում, որի դեպքում չի պահանջվում ստացող կողմի հաստատումը կամ համաձայնությունը.
10) **«Ազատ առաքում՝ համաձայնությամբ» կամ «FOP փոխանցում»՝** Պահառության մի հաշվից մյուսին արժեթղթերի փոխանցման տեսակ, որի դեպքում պահանջվում են և փոխանցող և ստացող կողմերի՝ համապատասխանաբար փոխանցման և ստացման հանդիպակաց Հանձնարարականներ.
11) **«Առաքում վճարման դիմաց» կամ «DVP փոխանցում»՝** Արժեթղթերի մի հաշվից մյուսին արժեթղթերի փոխանցման տեսակ, որի դեպքում արժեթղթերի և DVP փոխանցման համար անհրաժեշտ՝ Վերջնահաշվարկի ապահովման միջոց հանդիսացող դրամական միջոցների միաժամանակյա փոխանցումը համապատասխան հաշիվներում իրականացվում է փոխանցող և ստացող կողմերի, համապատասխանաբար, փոխանցման և ստացման հանդիպակաց Հանձնարարականների հիման վրա.
12) **«ՀԿԴ»՝** «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» բաց բաժնետիրական

ընկերություն.

13) **«Կենտրոնական բանկ»՝** Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,
14) **«Թողարկող»՝** ցանկացած անձ, որի կողմից թողարկված արժեթղթերը հանդիսանում են պահառության օբյեկտ, ինչպես նաև ՀՀ Ֆինանսների նախարարությունը և Կենտրոնական բանկը.
15) **«Օտարերկրյա պահառու»՝** Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս արժեթղթերի պահառության գործունեություն իրականացնելու իրավասություն ունեցող անձ.
16) **«Օտարերկրյա արժեթուղթ»՝** արժեթուղթ, որը ՀՀ ֆինանսների նախարարության կամ Կենտրոնական բանկի կողմից թողարկված պարտատոմս չէ և որի թողարկողը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ.
17) **«Պահառության հաշվի բացում»՝** Պահառուի հետգործառնական ծրագրում Հաճախորդի մասին սկզբնական տեղեկությունների մուտքագրում, ինչն հնարավորություն է տալիս կատարել Հաճախորդին պատկանող արժեթղթերով ցանկացած գործառնություն.
18) **«Պահառության հաշվի փակում»՝** Պահառուի հետգործառնական ծրագրում այնպիսի գրառումների կատարում, որոնք անհնարին են դարձնում այդ հաշվին կատարել ցանկացած գործառնություն, բացի տեղեկատվություն տրամադրելուց.
19) **«Արժեթղթերի գրավով կամ այլ ծանրաբեռնվածության գրանցում»՝** Արժեթղթերի գրավի և երրորդ անձանց այլ իրավունքների գրանցումը և գրանցման դադարեցումը, Պահառուի տվյալների բազայում արժեթղթերի վերաբերյալ համապատասխան տեղեկությունների մուտքագրումն է.
20) «**Արժեթղթերի փոխանցում»՝** համապատասխան Հանձնարարականի հիման վրա արժեթղթերի փոխանցումն է ինչպես Պահառուի մոտ վարվող Պահառության հաշվին, այնպես էլ այլ պահառուի կողմից վարվող պահառության/ արժեթղթերի հաշվին.
21) **«Արժեթղթերի փոխարկում»՝** Պահառության հաշվում հաշվառվող մեկ դասի արժեթղթերը մեկ այլ դասի արժեթղթերով փոխանակելու նպատակով իրականացվող գործառնությունն է՝ թողարկողի կողմից սահմանված փոխարկման կարգով.
22) **«Արժեթղթերի չեղյալ ճանաչում (մարում)»՝** Պահառության հաշվում հաշվառվող արժեթղթերի դուրս գրման նպատակով իրականացվող գործառնություն՝ արժեթղթերի թողարկման չեղյալ ճանաչման (որը ճանաչվել է չկայացած) և այլ դեպքերում, այդ թվում՝ արժեթղթերի մարման դեպքում.
23) **«Արժեթղթերի բաժանում (համախմբում)»՝** Գործառնություն, որն իրականացվում է որևէ դասի արժեթղթերի՝ տվյալ դասի ավելի մեծ (փոքր) քանակի արժեթղթերի փոխարկման նպատակով՝ համապատասխան գործակցով փոքրացնելով (մեծացնելով) մեկ արժեթղթի անվանական արժեքը.
24) **«Արժեթղթերի զծով եկամուտների վճարում»՝** Գործառնություն, որն իրականացվում է որևէ տեսակի արժեթղթերի դիմաց տվյալ արժեթղթերի թողարկողի կողմից

վճարվող եկամուտը թողարկողից ստանալով և տվյալ տեսակի արժեթղթերի սեփականատեր Հաճախորդներին վճարելով.

25) **«Արժեթղթերի արգելադրում»՝** Գործառնություն, որի արդյունքում արժեթղթերի փոխանցումներն արգելվում կամ սահմանափակվում են Կանոնակարգով և/կամ օրենսդրությամբ սահմանված դեպքերում, կարգով և ժամանակահատվածում.

26) **«Արժեթղթերի արգելադրման դադարեցում»՝** Արժեթղթերը արգելադրումից հանելու վերաբերյալ գրառումների կատարումն է.

27) **«Պահառության հաշվում ներառված տեղեկությունների փոփոխում»՝** Պահառուի տվյալների բազայում Հաճախորդի ինչպես նաև նրա լիազորված ներկայացուցիչների անձնական տվյալների փոփոխությունն է.

28) **Սակագներ՝** Պահառության պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող «Էփրիքոթ Կապիտալ» ՓԲԸ-ի «Բրոքերային ծառայությունների մատուցման սակագներ» և/կամ Հաճախորդի հետ համաձայնեցված հատուկ սակագներ՝ առկայության դեպքում.

29) **«Գործակալ»՝** անձ, որի ներգրավմամբ և միջնորդական ծառայություններից օգտվելու միջոցով Պահառուն իրականացնում է Գործառնություններ, այդ թվում՝ այլ պահառուն, օտարերկրյա պահառուն կամ ռեեստրավարը, որի մոտ Պահառուն ունի անվանատիրոջ հաշիվ, որում ամփոփ կամ առանձնացված ձևով հաշվառվում են Պահառուի կողմից պահառության վերցված արժեթղթերը.

30) **«ԱՀ (Առևտրային հարթակ)»՝** ցանկացած կարգավորվող շուկա, ինչպես նաև ֆինանսական գործիքների առևտրի կազմակերպման համար նախատեսված կազմակերպություն, համակարգ կամ այլ միջոց, որը որոշակի կանոնների համաձայն, ապահովում է արժեթղթերի առուվաճառք և դրա արդյունքում վերջնահաշվարկ իրականացնելու հնարավորություն և միջոցներ.

31) **«Արժեթղթերի պահպանում»՝** Պահառուի՝ Գործակալների մոտ բացված Անվանատիրոջ հաշվում առկա Հաճախորդի արժեթղթերի նկատմամբ իրավունքների հաշվառում՝ Պահառության հաշիվներում համապատասխան գրառումներ կատարելու միջոցով .

3. Սույն կանոնակարգում օգտագործվող այլ հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, դրա հիման վրա ընդունված ՀՀ Կենտրոնական բանկի և այլ նորմատիվ իրավական ակտերով, սահմանված նշանակությունները:

4.Կանոնակարգում օգտագործվող և Կանոնակարգի 2-րդ կետում չնշված հասկացություններն ունեն Օրենքում և դրա հիման վրա ընդունված այլ օրենսդրական ակտերում, Պահառուի՝ Բրոքերային (դիլերային) գործունեության կազմակերպման կանոնակարգում սահմանված նշանակությունը, իսկ սահմանված չլինելու դեպքում՝ միջազգային գործարար սովորույթների համաձայն այդ հասկացություններին տրվող նշանակությունը, եթե այլ բան ակնհայտորեն չի բխում կոնկրետ հասկացության կիրառման մասնավոր դեպքից:

5. Եթե ակնհայտորեն այլ բան չի բխում սույն Կանոնակարգի որևէ դրույթի կոնկրետ

համատեքստից՝ դրանց դրույթների մեկնաբանության սկզբունքներն հետևյալն են՝

5.1. ցանկացած փաստաթղթի (ներառյալ, առանց սահմանափակման՝ Պայմանագիրը, Կանոնակարգը, Սակագներ, Անձնական տվյալների պաշտպանության քաղաքականությունը) վկայակոչումը, մեջբերումը կամ դրան հղումը ենթադրում է տվյալ փաստաթղթի գործող տարբերակի, ներառյալ բոլոր փոփոխությունների ու լրացումների, մեջբերում, վկայակոչում կամ դրան հղում, եթե տվյալ վկայակոչման, մեջբերման կամ հղման մեջ հատուկ նշմամբ այլ բան նախատեսված չէ.

5.2. առանձին կետերին բոլոր հղումները վերաբերում են Կանոնակարգի կետերին, եթե հատուկ նշմամբ այլ բան նախատեսված չէ.

5.3. Կանոնակարգի գլուխների անվանումներն ունեն կողմնորոշիչ նշանակություն և չեն ազդում դրանց բովանդակության մեկնաբանման վրա.

5.4. եզակի թվով սահմանված հասկացություններն արտահայտում են նույնի հոգնակի թիվը ու հակառակը, եթե այլ բան չի բխում հասկացության կոնկրետ կիրառման դեպքից:

ԳԼՈՒԽ 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6. Պահառուն պահառության գործունեությունը իրականացնում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, Օրենքով, դրանց հիման վրա ընդունված այլ նորմատիվ իրավական ակտերով և սույն կանոնակարգով սահմանված կարգով:

7. Սույն կանոնակարգն հանդիսանում է հրապարակային փաստաթուղթ, որին կարող է ծանոթանալ ցանկացած շահագրգիռ անձ:

8. Պահառության գործունեության օբյեկտ կարող են հանդիսանալ ՀՀ-ում թողարկված և շրջանառվող ցանկացած արժեթուղթ, ինչպես նաև օտարերկրյա արժեթղթերը:

9. Պահառուի կողմից արժեթղթերի վերաբերյալ կատարված գրառումները հավաստում են արժեթղթերի նկատմամբ Հաճախորդների իրավունքները: Պահառության հանձնված արժեթղթերի սեփականության իրավունքը համարվում է փոխանցված՝ Հաճախորդի Պահառության հաշվում համապատասխան գրառում կատարելու պահից:

10. Արժեթղթերը պահառության հանձնելը չի հանգեցնում Պահառուին արժեթղթերի սեփականության իրավունքի փոխանցման:

11. Պահառուն Պահառության հաշվում գրառումներ կատարում է միայն նման գրառումներ կատարելու հիմք հանդիսացող փաստաթղթերի առկայության դեպքում:

12. Պահառուն ապահովում է իրեն և Հաճախորդներին պատկանող արժեթղթերի նկատմամբ իրավունքների առանձնացված հաշվառումը՝ սեփական արժեթղթերի հաշիվ և անվանատիրոջ հաշիվ (հաճախորդներին պատկանող արժեթղթերի համար) բացելով Հայաստանի Հանրապետությունում կամ Հայաստանի Հանրապետության տարածքից

դուրս արժեթղթերի պահառության գործունեություն իրականացնելու իրավասություն ունեցող Գործակալների մոտ,

13. Պահառուն ապահովում է յուրաքանչյուր Հաճախորդին պատկանող արժեթղթերի նկատմամբ իրավունքների առանձնացված հաշվառումը՝ յուրաքանչյուր Հաճախորդի համար բացելով առանձին Պահառության հաշիվ:

14. Պահառուն պարբերաբար իրականացնում է համեմատություններ, ճշգրտումներ իր և այն անձանց մոտ առկա՝ Հաճախորդների միջոցների վերաբերյալ տեղեկատվության միջև, որոնց մոտ պահվում են հաճախորդների միջոցները:

15. Հաճախորդներին սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերը ենթակա են առանձին հաշվառման այն արժեթղթերից, որոնք արժեթղթերի սեփականատեր չհանդիսացող անձը օգտագործում, տիրապետում կամ տնօրինում է օրենքով սահմանված իրավասության կամ արժեթղթերի սեփականատիրոջ հետ կնքված հանձնարարության, գործակալության, կոմիսիայի, հավատարմագրային կառավարման պայմանագրի հիման վրա: Առանձին հաշվառման ենթակա են նաև իրավունքների սահմանափակումներով արժեթղթերը: Արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքից բացի, այլ գույքային իրավունքներ ունեցող անձանց իրավունքները ենթակա են առանձին հաշվառման:

16. Պահառության գործունեությունը ներառում է նաև Պահառության պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով արժեթղթերից բխող իրավունքների իրականացման նպատակով Հաճախորդին ծառայությունների մատուցումը:

17. Պահառուն ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում իրականացնում է Հաճախորդի հարկային Գործակալի գործառույթներ: Հաճախորդը սույնով հաստատում է, որ պատշաճ տեղեկացված է և համաձայն է, որ այն դեպքերում, երբ Պահառուն չի հանդիսանում Հաճախորդի հարկային գործակալ, Հաճախորդն ինքն է կրում իր հարկային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման ռիսկը: Ընդ որում, ՀՀ տարածքում թողարկված պարտատոմսերից ստացված արժեկտրոնային եկամուտներից գոյացած հարկային պարտավորությունների հարկային գործակալ է հանդիսանում թողարկողը (իսկ Պահառուի կողմից թողարկված լինելու դեպքում՝ Պահառուն)՝ ՀՀ օրենսդրության կարգավորումներին համապատասխան: Պահառուն պատասխանատվություն չի կրում ցանկացած և բոլոր դեպքերում, երբ Հաճախորդին ՀՀ տարածքից դուրս թողարկված (արտասահմանյան) արժեթղթերից եկամուտները համապատասխան արժեթղթերի թողարկողների կողմից վճարվել են կամ վճարվելու են նման եկամուտների մասով կատարված/կատարման ենթակա հարկային վճարների նվազեցմամբ:

ԳԼՈՒԽ 4. ՊԱՀԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

18. Պահառության գործունեության շրջանակում Պահառուն առաջարկում է հետևյալ ծառայությունները (այսուհետ նաև՝ Ծառայություններ)՝
18.1. Պահառության հաշվի բացում, վարում և փակում,
18.2. արժեթղթերի նկատմամբ իրավունքների գրանցում,
18.3.Գործակալների մոտ Հաճախորդի արժեթղթերի անվանատեր հանդես գալը, Արժեթղթերի պահպանում,
18.4. արժեթղթերի պահառության և հաշվառման ընդունումը և հաշվառումից հանում,
18.5. արժեթղթերի փոխանցում,
18.6. արժեթղթերից բխող իրավունքների իրականացման նպատակով թողարկողի կամ այլ պահառուի կողմից Հաճախորդին, ինչպես նաև Հաճախորդի կողմից Թողարկողին կամ այլ պահառուին տեղեկությունների և փաստաթղթերի փոխանցում,
18.7. Պահառության հաշիվներով գործառնությունների և Հաճախորդի վերաբերյալ տեղեկանքների կազմում և տրամադրում,
18.8. Հաճախորդի Պահառության հաշվին հաշվեգրված արժեթղթերի հետ կապված թողարկողների կորպորատիվ գործողությունների արտացոլում՝ արժեթղթերի փոխարկում, արժեթղթերի չեղյալ համարում (մարում), արժեթղթերի բաժանում և համախմբում (կոնսոլիդացիան), արժեթղթերի գծով եկամուտների վճարում,
18.9. Հաճախորդի Պահառության հաշվին հաշվեգրված արժեթղթերի գրավով կամ այլ ծանրաբեռնվածության գրանցում, արժեթղթերի արգելադրում և արգելադրման դադարեցում,
18.10. Պահառության հաշվից քաղվածքների եւ գործառնությունների մասին տեղեկանքների (հաշվետվությունների) տրամադրում,
18.11. Պահառության հաշվում ներառված տեղեկությունների փոփոխում:
19. Հաճախորդին Ծառայությունների մատուցումը և նրա համար Պահառության հաշվի բացումը կատարվում է ՀՀ օրենսդրության համաձայն՝ սույն Կանոնակարգի և Պահառության պայմանագրի հիման վրա: Պահառության պայմանագիրը կնքվում է գրավոր:
Ընդ որում, այն Հաճախորդները, որոնց հետ Պահառուն կնքել է Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագիր, վերջիններիս համար սույն Կանոնակարգում նշված Ծառայությունները մատուցվում են այդ պայմանագրի հիման վրա բացված բրոքերային հաշվի միջոցով՝ առանց Պահառության պայմանագիր կնքելու և Պահառության հաշիվ բացելու:
20. Պահառության պայմանագրի օրինակելի ձևը սահմանվում է Պահառուի գործադիր մարմնի ղեկավարի որոշմամբ:
21. Մինչև Պահառության պայմանագրի կնքումը և Պահառության հաշվի բացումը Հաճախորդը պարտավորվում է ներկայացնել Պահառուի՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի» ընթացակարգով պահանջվող փաստաթղթեր:

22. Պահառության պայմանագրի կնքմամբ Հաճախորդի համար բացվում է Պահառության հաշիվ:
23. Պահառության պայմանագրի կնքումը և Պահառուի մոտ հաշվի բացումը Հաճախորդին չի պարտավորեցնում անմիջապես արժեթղթեր մուտքագրել այդ հաշվին:
24. Պահառության հաշվի մնացորդի դիմաց Պահառուն Հաճախորդին տոկոսներ չի վճարում՝ եթե այլ բան նախատեսված չէ Սակագներով կամ Հաճախորդի հետ կնքված պայմանագրով/համաձայնագրով:

ԳԼՈՒԽ 5. ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

25. Պահառուի կողմից պահառության գործունեությունը իրականացվում է էլեկտրոնային եղանակով:
26. Պահառության հաշիվների բացումը, վարումը, փակումը, ինչպես նաև Պահառության հաշիվներով գործառնությունների իրականացումը կատարվում է հետգործառնական ծրագրի համապատասխան դաշտերում տեղեկությունները մուտքագրելու միջոցով:
27. Պահառության հաշվի բացումը և վարումը իրականացվում է ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից 2007 թ.-ի փետրվարի 6-ին հաստատված «Արժեթղթերի պահառության գործունեությունը» կանոնակարգ 33-ի (այսուհետ՝ Կանոնակարգ 33) պահանջներին համապատասխան:
28. Պահառուն Գործառնություններն իրականացնում է Հաճախորդի, նրա լիազորված ներկայացուցչի (այդ թվում՝ բրոքերային ընկերության կամ հավատարմագրային կառավարչի), այլ ռեեստրավարի կամ պահառուի, Պահառուի աշխատակիցների և Պահառության պայմանագրով նախատեսված այլ անձանց Հանձնարարականների հիման վրա:
29. Որպես Հանձնարարական կարող են հանդիսանալ հետևյալ փաստաթղթերը՝
29.1. Հաճախորդի, նրա լիազորված ներկայացուցչի, ՀԿԴ-ի, այլ ռեեստրավարի կամ պահառուի, պահառուի պաշտոնատար անձանց և Պահառության պայմանագրով կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ անձանց կողմից սույն Կանոնակարգի պահանջներին համապատասխան լրացված թղթային կամ էլեկտրոնային փոստով, էլեկտրոնային հաղորդակցության ցանցի միջոցով տրված հանձնարարականը,
29.2. Հաճախորդի, նրա լիազորված ներկայացուցչի կողմից Պահառուի «Բրոքերային (դիլերային) գործունեության կազմակերպման կանոնակարգ»-ի պահանջներին համապատասխան լրացված թղթային կամ էլեկտրոնային փոստով, էլեկտրոնային հաղորդակցության ցանցի միջոցով տրված հանձնարարականը՝ եթե Հաճախորդն օգտվում է Պահառուի կողմից մատուցվող բրոքերային ծառայություններից,
29.3. ոչ քաղաքացիաիրավական գործարքի արդյունքում (դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ վճռի, որոշումների հիման վրա) արժեթղթերի նկատմամբ

իրավունքի փոխանցման դեպքում՝ այդ փոխանցումը հիմնավորող օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված փաստաթղթերը:

30. Հաճախորդը, էլեկտրոնային փոստով Հանձնարարական ներկայացնելը նախընտրելիս, գիտակցում է, որ Պահառուից անկախ տեխնիկական և այլ հանգամանքները հաշվի առնելով, բացառված չէ, որ ուղարկված Հանձնարարականը չի հասնի Պահառուին, նրան կհասնի ուշացումով, ուղարկված լինի համապատասխան լիազորություն չունեցող երրորդ անձանց կողմից կամ վերջիններիս հայտնի դարձած լինի այլ միջոցներով, այդ թվում ցանցային խափանումների, ցանցային չարտոնված մուտքերի, գաղտնաբառերի չարտոնված օգտագործման և այլ միջոցներով ու եղանակներով: Սույնով Հաճախորդն համաձայնվում է, որ Պահառուն ոչ մի դեպքում պատասխանատվություն չի կրում սույն կետում նշված իրադարձությունների արդյունքում Հաճախորդի կրած վնասների համար, իսկ Հաճախորդի՝ Պահառության պայմանագրում նշված էլեկտրոնային փոստի հասցեից ստացված Հանձնարարականն Պահառուի կողմից դիտարկվելու է որպես Հաճախորդից պատշաճ ստացված Հանձնարարական:

31. Հաճախորդի կողմից թղթային Հանձնարարականը ներակայցվում է առնվազն մեկ օրինակից, ընդ որում այդ օրինակը մնում է Պահառուի մոտ: Հաճախորդը իր հայեցողությամբ կարող է ներկայացնել նաև Հանձնարարականի երկրորդ օրինակը՝ խնդրելով, որ «Հանձնարարականն ընդունված է» նշագրմամբ վերադարձվի իրեն:

32. Հաճախորդը պարտավորվում է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները և իրականացնել պատշաճ վերահսկողություն, որպեսզի բացառի իր իրավասու էլեկտրոնային հասցեներին կամ այլ կապի միջոցներին /հաղորդակցման եղանակներին/ համապատասխան իրավասություն չունեցող անձանց /ոչ իրավասու անձանց/ կողմից մուտքը և/կամ նրանց հասանելիությունը: Բոլոր դեպքերում Հաճախորդի կապի միջոցների /հաղորդակցման եղանակների չարտոնագրված մուտքի կամ ապօրինի հասանելիության հետևանքով առաջացած բոլոր իրավական ռիսկերն ու հետևանքները (ներառյալ՝ իրավասության կամ լիազորության սահմանազանցման ռիսկը) կրում է Հաճախորդը:

33. Եթե Հաճախորդի Պահառության հաշվում հաշվառվող որևէ արժեթուղթ սեփականության իրավունքով պատկանում է մի քանի անձանց (համասեփականատերերի), ապա տվյալ արժեթղթով Պահառության գործառնությունն իրականացվում է բոլոր համասեփականատերերի կողմից ստորագրված հանձնարարականի կամ վերջիններիս կողմից լիազորված անձի տված հանձնարարականի հիման վրա:

34. Ստացված տեղեկությունների, փաստաթղթերի և պարզաբանումների հիման վրա՝ այդ թվում, բայց չսահմանափակվելով Պահառուի Ներքին դիտարկումների մարմնի կողմից տրված եզրակացության հիման վրա Պահառուն իրավունք ունի մերժել Հաճախորդի Հանձնարարականների, դիմումների և/կամ հարցումների կատարումը: Սույն կետով սահմանված գործողությունները կատարելու համար Պահառուն կարող է սույն Կանոնակարգով սահմանված Գործառնությունների կատարման ժամկետները

երկարաձգել այնքան ժամանակով, որքան անհրաժեշտ է անհրաժեշտ տեղեկատվությունը/իրավական կարծիքը ստանալու համար:

35. Այն դեպքում, երբ Պահառության գործառնություն կատարելու նախաձեռնությունը պատկանում է Պահառուին (մասնավորապես, երբ իրավական ակտերով սահմանված դեպքերում Պահառուն գրառումները կատարում է Պահառության պայմանագրում սահմանված կարգով Թողարկողի, Կենտրոնական դեպոզիտարիայի, այլ պահառուի կամ անձի տրամադրած տեղեկությունների հիման վրա), ապա հիմք են հանդիսանում այն փաստաթղթերը, որոնք հաստատում են արժեթղթերի փոխանցման փաստը:

36. Հաճախորդը պարտավոր է Պահառության պայմանագրով սահմանված ժամկետում Պահառուին ներկայացնել իր Արժեթղթերի հաշվում ներառված տեղեկությունների փոփոխությունները:

37. Պահառուն իրականացնում է Հաճախորդի Պահառության հաշվում առկա արժեթղթերի թողարկողի կամ արժեթղթերի մասին ռեեստրում առկա տեղեկությունների փոփոխությունների հետ կապված Գործառնություններ՝ տվյալ թողարկողից կամ Գործակալից ստացված ծանուցման հիման վրա՝ Համապատասխան փաստաթղթերը ստանալու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

38. Պահառուն իրականացնում է անվանական արժեթղթերի սեփականատերերի ցուցակի տրամադրման հետ կապված գործառնություններ թողարկողից կամ Գործակալից ստացված հարցման հիման վրա՝ այն ստանալու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

39. Պահառուի կողմից արժեթղթերի հաշվառումը կատարվում է Կանոնակարգ 33-ում նշված արժեթղթերի հաշվառման սկզբունքների համաձայն: Հաճախորդի Պահառության հաշվին հաշվեգրված արժեթղթերի փոխարկումը, արժեթղթերի բաժանումը և համախմբումը (կոնսոլիդացիան) տեղի է ունենում թողարկողի համապատասխան որոշումները ստանալու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

40. Հաճախորդի Պահառության հաշվին այլ պահառուների և անձանց կողմից փոխանցվող արժեթղթերի պահառության ընդունումն իրականացվում է Հաճախորդի հանձնարարականի հիման վրա, եթե այլ բան սահմանված չէ սույն Կանոնակարգով, որն ապահովվում է համապատասխան Հանձանարականը ստանալու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

41. Սույն Կանոնակարգի համաձայն Հաճախորդի հաշվով Գործառնությունների կատարումը ենթակա է մերժման, եթե Հաճախորդի Պահառության հաշվում (Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագիր կնքած Հաճախորդների դեպքում՝ Բրոքերային հաշվում) առկա չեն այդ Գործառնությունների դիմաց վճարում կատարելու համար բավարար միջոցներ կամ եթե Հաճախորդի Պահառության հաշիվում (Բրոքերային հաշվում) առկա միջոցները ծանրաբեռնված են այլ անձանց իրավունքներով կամ արգելադրված են:

42. Պահառության գործընթացի հետ կապված Հաճախորդի ցանկացած դիմում, բողոք քննարկվում է Պահառուի՝ «Հաճախորդների բողոքների քննության ընթացակարգ»-ով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 6. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆԵՐ

43. Արժեթղթերի փոխանցմամբ պայմանավորված Պահառուի կողմից իրականացվում են Գործառնությունների հետևյալ տեսակները.
43.1. Ազատ առաքում.
43.2. Առաքում վճարման դիմաց կամ DVP փոխանցում.
43.3. Ազատ առաքում՝ համաձայնությամբ կամ FOP փոխանցում:
44. Ազատ առաքմամբ արժեթղթերի փոխանցման Գործառնությունը կատարելու համար Հաճախորդը Պահառուին ներկայացնում է արժեթղթերի փոխանցման Հանձնարարական (բացառությամբ սույն Կանոնակարգով սահմանված դեպքերի, երբ Ազատ առաքմամբ արժեթղթերի փոխանցման Հանձնարարականը կարող է ներկայացվել այլ անձի կողմից) հետևյալ տեղեկություններով.

1) Արժեթղթեր փոխանցող և ստացող անձնանց անունները և ազգանունները (անվանումները).
2) արժեթղթեր փոխանցող և ստացող անձանց Պահառության հաշիվների համարները.
3) փոխանցվող արժեթղթերի Թողարկողի անվանումը և ԱՄՏԾ-ն կամ ԱՆԾ-ն.
4) փոխանցման ենթակա արժեթղթերի քանակը.
5) արժեթղթերի փոխանցման Գործառնության հիմքերի մասին էական տվյալները՝ գործարքի կնքման օրը, միավոր արժեթղթի գինը և գործարքի դրամական հատուցման չափը (առկայության դեպքում).
6) նշում արժեթղթերի փոխանցման վերջնական շահառուի վերաբերյալ (եթե արժեթղթերը փոխանցվում են անվանատիրոջ հաշվին):

45. «DVP փոխանցում» սկզբունքով արժեթղթերի փոխանցման/ստացման հանձնարարականը ներառում է հետևյալ տեղեկությունները.

1) արժեթղթեր փոխանցող/ստացող և ստացող/փոխանցող կողմերի անունները և ազգանունները (անվանումները).
2) նշում արժեթղթերի փոխանցման/ստացման վերջնական շահառուի վերաբերյալ (եթե արժեթղթերը փոխանցվում են Անվանատիրոջ հաշվին/հաշվից).
3) արժեթղթերը փոխանցողի/ստացողի Պահառության հաշվի համարը.
4) փոխանցման ենթակա Արժեթղթերի ԱՄՏԾ-ն կամ ԱՆԾ-ն.
5) արժեթղթերի քանակը.
6) վճարման ենթակա գումարի չափը.

7) վճարման ենթակա գումարի արժույթը.
8) գործարքի կնքման ամսաթիվը (առկայության դեպքում).
9) Վերջնահաշվարկի ամսաթիվը.
10) Վերջնահաշվարկի իրականացման համար նախատեսված այլ տեղեկությունները (առկայության դեպքում).

46. «FOP փոխանցում» սկզբունքով արժեթղթերի փոխանցման/ստացման հանձնարարականը ներառում է հետևյալ տեղեկությունները.

1) արժեթղթեր փոխանցող/ստացող և ստացող/փոխանցող կողմերի անունները և ազգանունները (անվանումները).
2) արժեթղթերը փոխանցողի/ստացողի Պահառության հաշվի համարը.
3) փոխանցման ենթակա Արժեթղթերի ԱՄՏԾ-ն կամ ԱՆԾ-ն.
4) արժեթղթերի քանակը.
5) գործարքի կնքման ամսաթիվը (առկայության դեպքում).
6) Վերջնահաշվարկի ամսաթիվը.
7) Վերջնահաշվարկի իրականացման համար նախատեսված այլ տեղեկությունները (առկայության դեպքում).

47. Հաճախորդի Պահառության հաշվում առկա արժեթղթերի փոխանցումը Պահառուի մոտ գտնվող այլ Հաճախորդի Պահառության հաշվին կամ Պահառուի Հաճախորդ չհանդիսացող անձին կատարվում է հետևյալ դեպքերում.

47.1. Հաճախորդի նախաձեռնությամբ՝

ա) Պահառուի միջոցով արժեթղթերի վաճառք (Պահառուի մատուցած բրոքերային ծառայություններից օգտվելու դեպքում)։ Այս դեպքում արժեթղթերի փոխանցումը տեղի է ունենում համապատասխան վաճառքի փաստը հաստատող փաստաթղթի (առքուվաճառքի պայմանագիր) և Հաճախորդի Հանձնարարականը ներկայացնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում,

բ) այլ ձևով արժեթղթերի վաճառք՝ վաճառքի փաստը հաստատող փաստաթղթի (առքուվաճառքի պայմանագիր) և Հաճախորդի Հանձնարարականի հիման վրա համապատասխան գործարքի պայմաններով սահմանված ժամկետներում,

գ) Արժեթղթերի փոխանցում այլ պատճառներով՝ Արժեթղթերի փոխանցման հանձնարարականը ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում, եթե տվյալ հանձնարարականում փոխանցման ավելի երկար ժամկետ նշված չէ։

47.2. դատարանի վճռով ազատ առաքմամբ՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի, որոշման կամ դատավճռի պատճենի, ինչպես նաև դրա հիման վրա դատական ակտերի հարկադիր կատարողի կողմից կայացված համապատասխան որոշման պատճենի (նման որոշման առկայության դեպքում), արժեթղթերը փոխանցելու վերաբերյալ դիմումի հիման վրա՝ համապատասխան փաստաթղթերը ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ եթե փոխանցման ավելի երկար ժամկետ նշված չէ,

47.3. Նվիրատվության (նվիրաբերության) հիման վրա FOP փոխանցմամբ՝ շահագրգիռ կողմի պահանջով համապատասխան նվիրատվության (նվիրաբերության) պայմանագիրը Պահառուի ներքին իրավական ակտերով սահմանված այլ տեղեկությունները և արժեթղթերը փոխանցելու վերաբերյալ հանձնարարականը ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում:
47.4 ժառանգության հիման վրա ազատ առաքմամբ՝ համապատասխան ժառանգության փաստը հավաստող փաստաթղթերը (ժառանգի կողմից ներկայացվում է ժառանգության իրավունքի վկայագիրը և/կամ դատարանի համապատասխան որոշման պատճենը և ՀՀ օրենսդրությամբ ժառանգության ճանաչման համար հիմք հանդիսացած փաստաթղթերի պատճենները, Պահառուի ներքին իրավական ակտերով սահմանված այլ տեղեկություններ) և արժեթղթերը փոխանցելու վերաբերյալ դիմումը ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում,
47.5. գրավադրված արժեթղթերի փոխանցում՝ Գրավի պայմանագրի պատճենի, Արժեթղթերի փոխանցման հանձնարարականի հիման վրա՝ համապատասխան փաստաթղթերը ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում,
47.6. Արժեթղթերի փոխանցում Պահառության հաշվի փակման կապակցությամբ:
48. Պահառուի միջնորդությամբ արժեթղթերի փոխանցման Գործառնություն կարող է կատարվել միայն այն դեպքում, եթե ներկայացվել են սույն Կանոնակարգով կամ այլ կիրառելի իրավական ակտերով սահմանված անհրաժեշտ տեղեկություններն ու փաստաթղթերը և բացակայում են Պահառուից անկախ խոճընդոտող (այդ թվում տեխնիկական բնույթի) հանգամանքներ:
49. «Առաքում վճարման դիմաց» և «Ազատ առաքում՝ համաձայնությամբ» սկզբունքներով արժեթղթերի փոխանցման Հանձնարարականները Պահառուի կողմից կարող է հետ կանչվել և/կամ միակողմանիորեն փոփոխվել մինչև հանդիպակաց կողմից մուտքագրված Հանձնարարականի հետ համընկման պահը, իսկ դրանից հետո՝ կողմերի համաձայնությամբ:

ԳԼՈՒԽ 7. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԳՐՎԱԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԵՎ ԳՐԱՆՑՄԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

50. Արժեթղթերի գրավի և երրորդ անձանց այլ իրավունքների գրանցումը և գրանցման դադարեցումը իրականացվում են ՀՀ գործող օրենսդրության և արժեթղթերի գրավի պայմանագրի պահանջներին համապատասխան:
51. Արժեթղթերի գրավի իրավունքը գրանցելու համար Հաճախորդ-գրավատուն պետք է ներկայացնի հետևյալ տեղեկությունները.

1) գրավադրման ենթակա արժեթղթերի Թողարկողի անվանումը և ԱՄՏԾ-ն կամ ԱՆԾ-ն.
2) գրավատու և գրավառուի Արժեթղթերի/Պահառության հաշվի համարները.
3) գրավադրման ենթակա արժեթղթերի քանակը.

4) գրավադրման դադարեցման ամսաթիվը (առկայության դեպքում).
5) գրավառուի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան, համարը, ռեզիդենտ ֆիզիկական անձի դեպքում՝ հանրային ծառայությունների (սոցիալական քարտի) կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու դեպքում՝ դրա բացակայությունը հավաստող տեղեկանքի համարը, ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի դեպքում՝ գրավառուին միանշանակ նույնականացնող այլ համարժեք համարանիշը (առկայության դեպքում), իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ անվանումը, պետական գրանցման համարը, ՀՎՀՀ կամ դրան համարժեք այլ համարը (առկայության դեպքում), գրավառուի հասցեն, կապի միջոցները.
6) արժեթղթերի գրավադրման հանձնարարականը.
7) արժեթղթերի գրավի պայմանագիրը.
8) Պահառուի ներքին իրավական ակտերով սահմանված այլ տեղեկություններ և փաստաթղթեր:

52. Արժեթղթերի գրավադրման դեպքում արժեթղթերով գործառնություններ կատարվում են միայն գրավառուի և գրավատուի կողմից համատեղ ստորագրված հանձնարարականների հիման վրա, բացառությամբ հաճախորդ-գրավատուի կողմից գրավառուի նկատմամբ իր պարտականությունները չկատարելու դեպքի: Այդ դեպքում, գրավով ծանրաբեռնված արժեթղթերով գործառնությունները կատարվում են արժեթղթերի գրավի մասին պայմանագրի պահանջներին համապատասխան:

53. Արժեթղթերի հաջորդող գրավով պայմանավորված Գործառնությունը Պահառուի կողմից գրանցվում է, եթե այն արգելված չէ գրավադրվող արժեթղթերի թողարկման պայմաններով և (կամ) արժեթղթերի գրանցման հայտարարագրում:

54. Գրավադրված արժեթղթերի՝ արտադատական կարգով իրացման հետ կապված՝ արժեթղթերի փոխանցման համար Հաճախորդ-գրավառուն Պահառուին ներկայացնում է հետևյալ փաստաթղթերի բնօրինակները կամ պատշաճ վավերացված պատճենները՝

1) գրավադրված արժեթղթերի՝ արտադատական կարգով իրացման հնարավորություն նախատեսող պայմանագիր/համաձայնագիր.
2) ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով գրավատուին կամ այլ պարտապանին (եթե գրավատուն պարտապանը չէ) պատշաճ ծանուցումը հիմնավորող տեղեկություններ (փաստաթղթեր).
3) Կանոնակարգով սահմանված արժեթղթերի փոխանցման Հանձնարարական.
4) ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված այլ փաստաթղթեր (այդպիսիք սահմանված լինելու դեպքում).
5) Պահառուի ներքին իրավական ակտերով սահմանված այլ փաստաթղթեր կամ տեղեկություններ (առկայության դեպքում):

55. Սույն կանոնակարգի 54-րդ կետում նշված գործառնության իրականացման դեպքում Պահառուն հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստուգելով ներկայացված փաստաթղթերը և համոզվելով, որ պահպանվել են Կանոնակարգով և ՀՀ օրենսդրությամբ

սահմանված պահանջները, կատարում է համապատասխան Հանձնարարականը, Հակառակ դեպքում Հանձնարարականի կատարումը մերժվում է:

56. Արժեթղթերի գրավի իրավունքի դադարեցումը կարող է կատարվել հետևյալ դեպքերում.

1) Գրավի իրավունքի դադարեցման ամսաթվին.

2) գրավի իրավունքի դադարեցման վերաբերյալ Հաճախորդ-գրավատուի Հանձնարարականի և գրավառուի համաձայնությունը հավաստող փաստաթղթի ներկայացման դեպքում.

3) գրավի առարկա հանդիսացող՝ տվյալ դասի և/կամ տեսակի արժեթղթերը չեղարկվել կամ մարվել են.

4) դատարանի, դատական ակտերի հարկադիր կատարողի կամ այլ իրավասու մարմնի համապատասխան որոշման հիման վրա.

5) ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

57. Արժեթղթերի գրավադրումը և արժեթղթերի գրավադրումից հանելու հանձնարարականը Պահառու կողմից կատարվում է այն ներկայացնելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ եթե սույն Կանոնակարգով այլ բան սահմանված չէ:

ԳԼՈՒԽ 8. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉՈՒՄ, ԱՐԳԵԼԱԴՐՈՒՄ ԵՎ ԴՐԱ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ

58. Պահառուն Արժեթղթերի չեղյալ ճանաչելու մասին գործառնությունը կատարում է համապատասխան փաստաթղթեր ստանալու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում հետևյալ դեպքերում՝

ա) բաժնետիրական ընկերության լուծարման դեպքում,

բ) արժեթղթերի թողարկումը չկայացած ճանաչվելու դեպքում,

գ) արժեթղթերի մարման դեպքում,

դ) ՀՀ օրենսդրությամբ (օտարերկրյա արժեթղթերի դեպքում՝ այդ արժեթուղթը գրանցող երկրի օրենսդրությամբ) նախատեսված այլ դեպքերում:

59. Պահառուի կողմից Պահառության հաշիվը կարող է արգելադրվել Հաճախորդի հանձնարարականով, դատարանի վճռով (ինչպես նաև դրա հիման վրա դատական ակտերի հարկադիր կատարողի կողմից կայացված համապատասխան որոշման հիման վրա՝ նման որոշման առկայության դեպքում)՝ անհրաժեշտ փաստաթղթերն ստանալու պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում կամ Պահառուի նախաձեռնությամբ: Պահառուի նախաձեռնությամբ հաշիվը կարող է արգելադրվել, եթե Հաճախորդը չի կատարում Պահառության պայմանագրով իր ստանձնած պարտավորությունները:

60. Պահառուի կողմից Պահառության հաշվի արգելադրումը դադարեցվում է Հաճախորդի հանձնարարականով, դատարանի վճռով (ինչպես նաև դրա հիման վրա դատական ակտերի հարկադիր կատարողի կողմից կայացված համապատասխան որոշման հիման

վրա՝ նման որոշման առկայության դեպքում)՝ անհրաժեշտ փաստաթղթերն ստանալու պահից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում, արգելադրման ժամկետը լրանալու դեպքում կամ Պահառուի նախաձեռնությամբ՝ Հաճախորդին ներկայացնելով համապատասխան տեղեկանք:

61. Եթե Պահառության հաշիվը արգելադրվել է ոչ Հաճախորդի նախաձեռնությամբ, ապա արգելադրումը չի կարող դադարեցվել Հաճախորդի նախաձեռնությամբ:

ԳԼՈՒԽ 9. ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԻ ՓԱԿՈՒՄ, ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄ

62. Պահառության պայմանագիրը կարող է լուծվել.

1) Հաճախորդի ցանկությամբ՝ սույն Կանոնակարգով և Պահառության հաշվի փակման կամ Պահառության պայմանագրի լուծման գրավոր դիմումի (Հանձնարարականի) հիման վրա՝ համապատասխան ծանուցում ներկայացնելու 20-րդ օրը: Եթե Հաճախորդի Պահառության հաշվին առկա են արժեթղթեր, ապա Պահառության պայմանագիրը Հաճախորդի ծանուցմամբ կարող է լուծվել միայն Հաճախորդի կողմից համապատասխան արժեթղթերի փոխանցման և Պահառության հաշվի փակման հանձնարարականը Պահառուին ներկայացնելու և Պահառության հաշվի մնացորդը զրոյական լինելու դեպքում:

2) Պահառուի ցանկությամբ՝ Հաճախորդին այդ մասին առնվազն 10 (տասը) օր առաջ ծանուցելու պայմանով: Սույն կետում նշված Ծանուցման պահից սկսած Պահառուն կարող է չընդունել Հաճախորդի այն Հանձնարարականները, որոնք ուղղված են նոր դիրքերի բացմանը: Եթե Հաճախորդի Պահառության հաշվին առկա են արժեթղթեր, ապա Պահառության պայմանագիրը կարող է լուծվել միայն Հաճախորդի կողմից Պահառուին ներկայացվող հանձնարարականի/գրության հիման վրա արժեթղթերը վերջինիս փոխանցելու դեպքում: Եթե Հաճախորդը չի ներկայացնում սույն կետում նշված հանձնարարականը/գրությունը, կամ ներկայացնում է ոչ ամբողջական/ոչ ճշգրիտ տեղեկատվություն, ապա Պահառուն կարող է յուրաքանչյուր օրվա համար գանձել տույժ՝ Հաճախորդի Պահառության հաշվին առկա արժեթղթերի շուկայական արժեքի 0.1%-ի չափով: Եթե Հաճախորդը չի ներկայացնում սույն կետում նշված հանձնարարականը/գրությունը վերջինիս Ծանուցում ուղարկելու պահից 3 (երեք) ամսվա ընթացքում կամ ներկայացնում է ոչ ամբողջական/ոչ ճշգրիտ տեղեկատվություն, ապա Պահառուն կարող է Հաճախորդից գանձել տուգանք Հաճախորդի Պահառության հաշվին առկա արժեթղթերի շուկայական արժեքի 50%-ի չափով: Այն դեպքում, երբ սույն կետում նշված տուգանքը կիրառելու պահից 3 (երեք) ամսվա ընթացքում Հաճախորդը ևս չի ներկայացնում սույն կետում նշված հանձնարարականը/գրությունը կամ ներկայացնում է ոչ ամբողջական/ոչ ճշգրիտ տեղեկատվություն, ապա Պահառուն կարող է Հաճախորդից գանձել տուգանք Հաճախորդի Պահառության հաշվին առկա արժեթղթերի շուկայական արժեքի 50%-ի

չափով, բայց ոչ ավել քան Պահառության հաշվին առկա միջոցներն են:

3) Պահառուի նախաձեռնությամբ Պահառության պայմանագրի միակողմանիորեն լուծման դեպքում՝ 10 (տասը) օր առաջ ծանուցելով Հաճախորդին՝ եթե վերջին 6 (վեց) ամսվա ընթացքում Հաճախորդի Պահառության հաշիվն ունեցել է զրոյական մնացորդ.

4) Պահառուի լուծարման կամ պահառության գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու դեպքում.

5) արժեթղթերի պահպանման վայրերի գործունեության դադարեցման դեպքում.

6) ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

63. Պահառության պայմանագիրը կարող է լուծվել և Պահառության հաշիվը կարող է փակվել միայն եթե տվյալ Պահառության հաշիվն ունի արժեթղթերի զրոյական մնացորդ.

64. Սույն Կանոնակարգի 62-րդ կետում նշված դեպքերում Պահառության պայմանագրի լուծումը կատարվում է միայն Հաճախորդի կողմից պահառության ծառայությունների դիմաց վճարելուց և Պահառուի փաստացի ծախսերի փոխհատուցումից հետո (առկայության դեպքում):

65. Սույն Կանոնակարգում նշված որևէ դեպքում Պահառության պայմանագրի լուծումն հիմք է Հաճախորդի Պահառության հաշիվը փակելու համար:

66. Պահառության պայմանագրի ցանկացած հիմքով լուծման դեպքում Պահառուն ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում ապահովում է Հաճախորդի Պահառության հաշիվների փակումը, ինչպես նաև Հաճախորդի հանձնարարականի/ցուցումների համաձայն արժեթղթերի վերադարձը վերջինիս՝ նշված արժեթղթերը վերջինիս կողմից նշված հաշիվներին փոխանցելու միջոցով: Սույն կետով նախատեսված հանձնարարականները/ցուցումները Հաճախորդը պարտավոր է տալ Պահառության պայմանագրի լուծումից կամ այլ հիմքով դադարումից առնվազն 2 (երկու) աշխատանքային օր առաջ և վճարել այդ հանձնարարականի կատարման համար:

67. Եթե Պահառության պայմանագիրը լուծվել է Հաճախորդի նախաձեռնությամբ, վերջինս պարտավոր է հատուցել Պահառուին մինչև Պահառության պայմանագրի լուծման պահն առաջացած բոլոր ծախսերը:

ԳԼՈՒԽ 10. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՔԱՂՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ, ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

68. Սույն Կանոնակարգի 18-րդ կետի 18.6, 18.7 և 18.10 ենթակետերով սահմանված տեղեկատվական գործառնությունները կապված են Պահառության հաշիվների վերաբերյալ քաղվածքների, հաշվետվությունների կամ այլ փաստաթղթերի, ինչպես նաև Գործառնությունների կատարման վերաբերյալ տեղեկատվություն կազմելու և տրամադրելու հետ: Մասնավորապես՝ Պահառուն տրամադրում է քաղվածքներ, հաշվետվություններ և այլ տեղեկանքներ Պահառության հաշիվների բացման, Պահառության հաշիվներով կատարված յուրաքանչյուր գործառնության մասով,

պատասխանում է Հաճախորդների, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված այլ անձանց հարցումներին:

69. Պահառուն Հաճախորդի պահանջով իր մոտ վարվող Հաճախորդի Պահառության հաշիվների վերաբերյալ տրամադրում է ցանկացած տեղեկություն, ներառյալ արժեթղթերի փակված հաշիվների վերաբերյալ՝ փակման պահից երեք տարվա ընթացքում:

70. Հաճախորդն իրավունք ունի Պահառուից ստանալ հետևյալ տեղեկությունները.

1) տեղեկանք իր Պահառության հաշվի մնացորդի վերաբերյալ, որը ներառում է տեղեկություններ Պահառության հաշվում առկա բոլոր արժեթղթերի մնացորդի վերաբերյալ.

2) հաշվետվություն Պահառության հաշվով կատարված գործառնությունների վերաբերյալ.

3) տեղեկանք Պահառության հաշվում գրանցված գրավի իրավունքների վերաբերյալ.

4) Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված տեղեկություններ:

71. Յուրաքանչյուր Գործառնության կատարման ավարտից հետո, բայց ոչ ուշ, քան մինչև Գործառնության կատարման օրվան հաջորդ աշխատանքային օրվա ավարտը Պահառուն սույն կանոնակարգով նախատեսված անձանց տրամադրում է գրառման կատարման կամ մերժման մասին հաշվետվություն, քաղվածք, ծանուցում կամ տեղեկանք:

Սույն կետում նշված հաշվետվությունները, քաղվածքները կամ տեղեկանքները Հաճախորդին ներկայացվում են թղթային կամ էլեկտրոնային եղանակով՝ Պահառության պայմանագրում (Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագիր կնքած Հաճախորդների դեպքում՝ Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրում) նշված հասցեներով:

72. Գործառնության կատարման հաշվետվությունը առնվազն ներառում է հետևյալ տեղեկատվությունը.

- տվյալ գործառնության համար գանձված ծառայության վճարի չափի մասին տեղեկատվություն,
- Պահառության հաշվի համարը,
- հաշվետիրոջ անուն, ազգանուն, անձը հաստատող փաստաթղթի համար, բնակության և/կամ հաշվառման հասցե՝ ֆիզիկական անձի դեպքում, և անվանում, հարկ վճարողի հաշվառման համար կամ համապատասխան պետական մարմնի կողմից տրված այլ նույնականացման համարը, գտնվելու վայր (փոստային հասցե)՝ իրավաբանական անձի դեպքում,
- Գործառնության գրանցման ամսաթիվը և հակիրճ բովանդակությունը,
- հաշվետվության կազմման ամսաթիվը և ժամը,
- գործարքի առարկա արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը և քանակը, անվանական արժեքը և արժույթը (եթե Գործառնությունը հանգեցրել է արժեթղթերի մնացորդի հետ կապված որևէ տեղեկության փոփոխության):

73. Պահառուն Թողարկողին, ՀԿԴ-ին, Կենտրոնական բանկին, ինչպես նաև

օրենսդրությամբ սահմանված այլ անձանց Հաճախորդների և նրանց հաշիվների վերաբերյալ տեղեկություններ տրամադրում է օրենքով սահմանված կարգով ներկայացված հարցման հիման վրա՝ այն ստանալու պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում, եթե տվյալ հարցման մեջ ավելի երկար ժամկետ նշված չէ:

ԳԼՈՒԽ 11. ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԸ

74. Պահառության Գործառնությունների դիմաց Պահառուն Հաճախորդից գանձում է վճարներ՝ ըստ Սակագների: Հաճախորդին համար իրականացված Գործառնությունների հետ կապված Պահառուի բոլոր ծախսերը փոխհատուցվում են Հաճախորդի կողմից՝ փաստացի արժեքով:

75. Սակագները կարող են միակողմանիորեն փոխվել Պահառուի կողմից և ուժի մեջ են մտնում Հաճախորդին այդ փոփոխության մասին ծանուցելու և/կամ Պահառուի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակելու օրվան հաջորդող 21-րդ օրը:

76. Հաճախորդը պարտավոր է հատուցել Պահառուի կողմից Հաճախորդի Հանձնարարականների կատարման և/կամ ի կատարումն հաղորդման հետ կապված գործառնական ծախսերը, որոնք կարող են առաջանալ Պահառուի Գործակալների կողմից երրորդ անձանց ներգրավմամբ գործարքներ կնքելու և վերջնահաշվարկ ապահովելու անհրաժեշտությունից, մասնավորապես՝ ԱՀ-ների և/կամ այլ միջնորդների կողմից Գործակալներից գանձվող վճարները (բացառությամբ Գործակալների հետ Պահառուի կնքած պայմանագրերով սահմանված սակագներով գանձվող ստանդարտ միջնորդավճարների), որոնք կարող են տարբեր լինել՝ կախված ԱՀ-ից, գործարքի տեսակից, ծավալից և այլ հանգամանքներից: Նման ծախսերը արտացոլվում են Սակագներում: Հաճախորդին ներկայացվող հաշվետվություններում արտացոլվում են թե՛ նշված ծախսերը, և թե՛ դրանց հատուցման համար Պահառուի կողմից իրականացված գանձումները/ պահումները:

77. Հաճախորդը պարտավոր է կատարել սույն Կանոնակարգում և Պահառության պայմանագրում նշված վճարները, ծախսերի հատուցումները, տոկոսների, տույժերի ու տուգանքների վճարումը և Հաճախորդի՝ Պահառուի նկատմամբ ցանկացած այլ տեսակի ֆինանսական պարտավորությունների գումարների վճարումը: Սույն կետում նշված վճարումներն իրականացվում են Հաճախորդի կողմից Պահառության հաշվին առկա գումարներից (Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագիր կնքած Հաճախորդների դեպքում՝ Բրոքերային հաշվին առկա գումարներից)՝ յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում անակցեպտ գանձումների միջոցով՝ տվյալ օրվա գործառնությունների համար վճարման ենթակա գումարի չափով:

78. Հաճախորդի կողմից վերոնշված վճարումները սահմանված ժամկետներում չիրականացնելու դեպքում սույն Կանոնակարգում և Պահառության պայմանագրում նշված վճարները, ծախսերի հատուցումների, տոկոսների, տույժերի ու տուգանքների, ինչպես նաև

Պահառուի նկատմամբ ցանկացած այլ տեսակի ֆինանսական պարտավորությունների գումարները գանձելու նպատակով Հաճախորդը սույնով լիազորում է Պահառուին իրացնել Հաճախորդի Պահառության հաշվում առկա արժեթղթերը դրանց շուկայական իրացվելի գնով՝ գործադրելով լավագույն ջանքեր Հաճախորդի համար առավել բարենպաստ պայմաններով դրանք իրացնելու համար:

ԳԼՈՒԽ 12. ԵՐԱՇԽԻՔՆԵՐ ԵՎ ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐ

79. Պահառության պայմանագրի և սույն Կանոնակարգի շրջանակներում Պահառուն երաշխավորում է, որ՝

79.1. պատշաճ իրավունակությամբ օժտված անձ է և իրավասու է Հաճախորդի հետ կնքել Պահառության պայմանագիր,

79.2. առկա են Պահառուի կողմից պահառուական ծառայություններ մատուցելու համար անհրաժեշտ բոլոր լիցենզիաները և թույլտվությունները,

79.3. Պահառուի անունից Պահառության պայմանագրը ստորագրող անձինք իրավասու են ստորագրել այն և այդպիսով Պահառուի համար ստեղծել, փոփոխել և դադարեցնել Պահառության պայմանագրից բխող իրավունքներ ու պարտականություններ,

80.Պահառության պայմանագրի ստորագրմամբ Հաճախորդը հաստատում և հավաստիացնում է հետևյալը.

80.1. Հաճախորդն իր գրանցման (քաղաքացիության) երկրի օրենսդրության (անձնական օրենքի) համաձայն պատշաճ իրավունակությամբ և գործունակությամբ օժտված անձ է և իրավասու է կնքել Պահառության պայմանագրը, իր անունից ձեռք բերել իրավունքներ ու պարտականություններ:

80.2.Պահառության պայմանագիրը ստորագրող անձն իրավասու է ստորագրել/հաստատել այն Հաճախորդի անունից համաձայն կիրառելի օրենսդրության և Հաճախորդի կանոնադրության ու ներքին իրավական ակտերի (իրավաբանական անձի դեպքում), ինչպես նաև այդպիսի ստորագրությամբ/հաստատմամբ Հաճախորդի համար ստեղծել, փոփոխել ու դադարեցնել իրավաբանական ուժ ունեցող իրավունքներ և պարտականություններ:

80.3. Մինչև Պահառության պայմանագրի կնքումը/հաստատումը նախապես ծանոթացել է Պահառության պայմանագրի, Կանոնակարգի, Սակագների, Պահառուի՝ ներդրումային ծառայությունների հետ կապված հնարավոր ռիսկերի հայտարարագրի, Հաճախորդների դասակարգման և տեղեկատվության փոխանակման կանոնակարգի, Անձնական տվյալների պաշտպանության քաղաքականության, ինչպես նաև Պահառուի պաշտոնական վեբ կայքում հրապարակված այլ ներքին իրավական ակտերի ու փաստաթղթերի բովանդակությանն ու պայմաններին և ընդունում է դրանք, ծանոթացել/ծանոթանալու է Պահառության պայմանագրի շրջանակներում կամ ի կատարումն Պահառության պայմանագրի իր կողմից ներկայացվող/ներկայացված բոլոր Հանձնարարականների բովանդակությանը՝ այդ թվում արժեթղթերի տնօրինման մասով, իր կողմից ներկայացվող

Հանձնարարականներից յուրաքանչյուրի մասով հաստատում է, որ տեղեկացված է և տիրապետում է Հանձնարարականների ներկայացման և/կամ դրանցում նշված արժեթղթերի վերաբերյալ որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ ամբողջական տեղեկատվությանը, ներառյալ, սակայն չսահմափակվելով այդ արժեթղթերի տեղեկատվական թերթիկին, ազդագրին, առաջարկի պայմաններին, սահմանափակումներին և պահանջներին, և համապատասխանում է Հանձնարարականների ներկայացման /արժեթղթերի ձեռքբերման/օտարման և/կամ տնօրինման համար սահմանված ցանկացած և բոլոր պահանջներին:

80.4 գիտակցում և ընդունում է, որ իր կողմից տրված և Պահառուի կողմից Գործակալներին փոխանցած Հանձնարարականի ընդունումն ի կատարումն կամ դրա կատարումը կարող է մերժվել՝ հաշվի առնելով Գործակալների կողմից տվյալ Հանձնարարականի կատարումը ապահովելու հնարավորության բացակայությունը կամ եթե համապատասխան Գործակալների կողմից սահմանվում կամ կիրառվում են Հանձնարարականի կատարումն անհնարին դարձնող արգելքներ /սահմանափակումներ:

ԳԼՈՒԽ 13. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

81. Պահառուն և Հաճախորդը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն են կրում Պահառության պայմանագրով և սույն Կանոնակարգով ստանձնած իրենց պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

82. Կողմերը պատասխանատվություն են կրում Կանոնակարգի 12-րդ գլխում նշված իրենց երաշխիքների և հավաստիացումների արժանահավատության համար և պարտավոր են հատուցել մյուս կողմին այդպիսի երաշխիքների և հավաստիացումների՝ իրականությանը չհամապատասխանելու արդյունքում պատճառված վնասը: Կողմերն ազատվում են սույն պայմանագրով իրենց պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունից, եթե դրա պատճառ է հանդիսացել մյուս կողմի՝ Կանոնակարգի 12-րդ գլխում նշված երաշխիքների և հավաստիացումների իրականությանը չհամապատասխանելը:

83. Պահառուն պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց, այդ թվում՝ գործարքների կնքման գործընթացում Պահառուի կողմից ներգրավված Գործակալների և կամ Հաճախորդի միջոցները հաշվառելու համար որպես պահառու ընտրված անձանց, Գործառնությունների հակառակ կողմի անվճարունակության կամ սնանկության, ինչպես նաև վերջիններիս կողմից գործարքներով, այդ թվում՝ արժեթղթերի փոխանցման հանձնարարականներից բխող պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով (այդ թվում՝ սույն Կանոնակարգի 87-րդ կետում նշված մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցների, սահմանափակումների պատճառով) Հաճախորդին պատճառված վնասի համար, եթե չգիտեր և չէր կարող իմանալ նշված

հանգամանքների առկայության կամ անխուսափելիության մասին՝ վերջիններիս հետ պայմանագրային հարաբերություններ հաստատելիս՝ բացառությամբ եթե Հաճախորդը տեղեկացված է եղել նշված հանգամանքների մասին և Պահառուին առարկություն չի ներկայացրել համապատասխան անձի հետ պայմանագրային հարաբերություններ հաստատելու համար:

84. Հաճախորդի Հանձնարարականներով կատարված գործարքների մյուս կողմի կողմից այդ գործարքով իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու ռիսկը կրում է Հաճախորդը, իսկ Պահառուն հավաստում է, որ լավագույն ջանք կգործադրի՝ պատշաճ կատարում պահանջելու համար, սակայն նշվածի վերաբերյալ սույնով ոչ մի երաշխիք չի տալիս և պարտավորություն չի ստանձնում: Սույնով կողմերն հավաստում են, որ հաշվի առնելով այն, որ Հանձնարարականների կատարումը կարող է տեղի ունենալ կարգավորված շուկաներում՝ հիմնականում Գործակալների և հաջորդականորեն նրանց ենթագործակալների շղթայի միջոցով և այդպիսի Գործակալների և ենթագործակալների կողմից, որ Պահառուն Հաճախորդի Հանձնարարականները միայն փոխանցում/հաղորդում է Գործակալներին ի կատարում, որոնք իրենց հերթին այն կարող են նույնպես ի կատարում փոխանցել իրենց ենթագործակալներին և Պահառուն նման պայմաններում հնարավորություն չունի շրջահայացություն ցուցաբերել այդպիսի ենթագործակալ անձանց ընտրության հարցում, Պահառուն ազատվում է Հանձնարարականի հիման վրա կնքված գործարքներով երրորդ անձանց կողմից իրենց պարտավորությունները չկատարելու համար պատասխանատվությունից: Սույնով Կողմերն համաձայնվում են, որ Պահառուն համարվում է պատշաճ շրջահայացություն չցուցաբերած միայն այն դեպքում, երբ Հանձնարարականները կատարող կամ հաղորդող Գործակալներին ընտրելու/հնարավորություն ունենալով՝ ընտրել է այնպիսի անձ, որի սնանկության/անվճարունակության կամ դրա անխուսափելիության մասին տեղյակ է եղել ինքը՝ այդպիսի ընտրություն կատարելիս:

85. Պահառուն պատասխանատվություն չի կրում ԱՀ-ների գործողությունների կամ անգործության արդյունքում, ինչպես նաև գործարքի կողմ հանդիսացող անձանց կողմից Հաճախորդի Պահառության հաշվում առկա արժեթղթերով վերջնահաշվարկի չկայացման կամ ոչ պատշաճ իրականացման համար՝ անկախ դրա պատճառներից, ինչպես նաև ցանկացած բնույթի տեխնիկական խափանումների (այդ թվում այն դեպքերում, երբ Ծառայությունները Հաճախորդին մատուցվում են Պահառուի ծրագրային ապահովումների միջոցով և տեղի է ունենում ցանկացած տեխնիկական խափանում) արդյունքում Հաճախորդին պատճառված վնասի համար, եթե չի ապացուցվում որ այդպիսի խափանումները և վնասը տեղի են ունեցել Պահառուի դիտավորությամբ տեղի ունեցած գործողությունների արդյունքում:

86. Պահառուն պատասխանատվություն չի կրում օրենքով սահմանված կարգով իրենից տեղեկություններ ստացած անձանց կողմից երրորդ անձանց շրջանակում Պահառուի

կողմից նրանց տրամադրած ծառայողական տեղեկատվության բացահայտման համար:

87. Պահառուն պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կրած այն վնասների համար, որոնք առաջացել են Պահառուի մոտ Հանձնարարականները կատարելու կամ ի կատարում փոխանցելու փաստացի անհնարինության իրավիճակ առաջանալու դեպքում՝ ցանկացած (այդ թվում՝ Պահառուի բացառիկ, լիարժեք և ամբողջական վերահսկողության ներքո չգտնվող և երրորդ անձանց և արտաքին միջավայրի հետ կապված հանգամանքներով պայմանավորված) պատճառներով՝ այդ թվում Կենտրոնական բանկի, ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի, OFAC, ԵՄ, ՄԲ և/կամ այլ մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցների հետևանքով Հանձնարարականների չկատարման կամ ոչ լիարժեք կատարման պատճառով Հաճախորդի կրած ցանկացած վնասի համար՝ անկախ հետևանքների վրա հասնելու ժամանակից:

88. Պահառուն պատասխանատվություն չի կրում Հաճախորդի Հանձնարարականով կատարված Գործառնությունների մյուս կողմի կողմից իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, այդ թվում տվյալ գործարքի չեղարկման արդյունքում (այդ թվում՝ սույն Կանոնակարգի 87-րդ կետում նշված մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցների, սահմանափակումների պատճառով) գործարքի մյուս կողմի կողմից գործարքի կատարման համար փոխանցված Հաճախորդի արժեթղթերը չվերադարձնելու արդյունքում Հաճախորդի կրած վնասների համար, և այդ դեպքում արժեթղթերի չվերադարձման ռիսկը կրում է Հաճախորդը:

89. Ցանկացած դեպքում Պահառուի պատասխանատվությունը Հաճախորդի առջև սահմանափակվում է դիտավորություն կամ ակնհայտ անփութություն ցուցաբերելու արդյունքում՝ Հանձնարարականների խախտմամբ գործարքներ կնքելու և սույն Կանոնակարգով սահմանված համապատասխան իրավական հիմքերի բացակայության դեպքերում Հանձնարարականը չկատարելու դեպքերով և նրան պատճառված իրական վնասի չափով:

90. Պահառության պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Պահառուն և Հաճախորդն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պահառության պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Պահառության պայմանագրի իմաստով անհաղթահարելի ուժի արդյունք հանդիսացող իրավիճակներ են համարվում տարերային աղետները, վթարները, հրդեհները, զանգվածային անկարգությունները, գործադուլները, ռազմական գործողությունները, Պահառության պայմանագրում նշված գործունեության տեսակները ուղղակիորեն կամ անուղղակի ձևով արգելող և կողմերի՝ Պահառության պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունների կատարմանը խոչընդոտող օրենսդրական և նորմատիվ ակտերի, պետական մարմինների որոշումների (հրամանների) օրինական ուժի մեջ մտնելու փաստերը, կամ Կողմերի կամքից անկախ այլ իրադարձությունները:

91. Պահառության պայմանագրի այն կողմը, որը չի կարող կատարել իր պարտականությունները՝ կապված անհաղթահարելի ուժի ազդեցության հետ, պարտավոր է այդ մասին, անհաղթահարելի ուժի ազդեցության ի հայտ գալու պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում, էլեկտրոնային կապի միջոցներով հայտնել մյուս կողմին և կատարել բոլոր անհրաժեշտ գործողությունները, որպեսզի նվազեցվեն կողմերի կրած վնասները:
92. Կանոնակարգի 91-րդ կետում նշված պայմանի չկատարման դեպքում Պահառության պայմանագրի համապատասխան կողմը կորցնում է իր իրավունքը նման պայմանների վկայակոչման համար:
93. Անհաղթահարելի ուժի աղդեցության վերացումից հետո կողմերը շարունակում են Պահառության պայմանագրով/Կանոնակարգով նախատեսված իրենց պարտավորությունների կատարումը:

ԳԼՈՒԽ 14. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

94. Պահառուի և Հաճախորդի միջև Պահառության պայմանագրի և/կամ Կանոնակարգի գործողության կապակցությամբ առաջացած վեճերը ենթակա են լուծման ՀՀ իրավասու դատարանների կողմից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Պահառության պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:
95. Հաճախորդի կողմից Կանոնակարգի 19-րդ կետում նշված կարգով Պահառության պայմանագրի կնքման պահից սույն Կանոնակարգը կազմում է Պահառության պայմանագրի անբաժանելի մասը, և գործում է մինչև Պահառության պայմանագրով կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հիմքերով դրա գործողության դադարումը: Բոլոր դեպքերում, սակայն, Պահառության պայմանագիրը շարունակում է գործել ընդհուպ մինչև Պահառության պայմանագրով Կողմերի ստանձնած պարտավորությունների և պարտականությունների լրիվ և պատշաճ կատարումը՝ նշված պարտավորությունների/պարտականությունների մասով:
96. Սույն Կանոնակարգի փոփոխությունները և լրացումները հաստատվում են Պահառուի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից (եթե Պահառուի մոտ խորհուրդ չի ձևավորվել) և ուժի մեջ են մտնում ժողովի կողմից հաստատման պահից:
97. Պահառուն իրավունք ունի սույն կանոնակարգում կատարել փոփոխություններ, լրացումներ՝ առանց Հաճախորդի նախնական համաձայնության:
98. Սույն Կանոնակարգում կատարված փոփոխությունները և լրացումները Հաճախորդների համար ուժի մեջ են մտնում փոփոխության մասին ծանուցելու և/կամ Պահառուի պաշտոնական ինտերնետային կայքում Կանոնակարգը հրապարակելու օրվան հաջորդող 21-րդ օրը:
99. Պահառուն պարտավոր է ծանուցել Հաճախորդներին՝ Կանոնակարգի փոփոխությունների մասին՝ տեքստը Պահառուի տարածքում և/կամ Պահառուի

ինտերնետային կայքում հասանելի դարձնելու և/կամ հաճախորդների կողմից տրամադրված էլեկտրոնային փոստային հասցեներին դրա ուժի մեջ մտնելու պահից 20 օր առաջ ուղարկելու միջոցով:

100. Պահառուն հանդիսանում է անձնական տվյալներ մշակող՝ համաձայն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի: Սույնով Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը Պահառուի կողմից իր անձնական տվյալները Անձնական տվյալների պաշտպանության քաղաքականության համաձայն մ շակելու վերաբերյալ: